


ՏԵՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻՍԻ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ՄԱՐԿԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻԻԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրապատի համար տեղի. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու.
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութիւնն
մակ կամ ալ գրութիւնն եւ չի տրուիր:

ՃԾՄԱՐԻՏ Է

Եւրոպական վերջին Սուրհանդակի թեր-
թերուն մէկ անկիւնը կորստած լուր մը մեր
ուշադրութիւնը կը գրաւէ:

«Կը հաւատեն թէ գետնային ի մօտոյ
պիտի խնդրեն Սուլթանէն՝ Հայաստանի բա-
րենորդութեան տրուելը»:

«Հայաստան», «Բարենորդութիւն» և «Դես-
պան» բառերն այնքան ատենն ի վեր իրա-
րու միացած չեն, նոյն իսկ թուղթի վրայ, որ
բոլորովին նոր ու եզակի զուգորդութիւն մը
կը ներկայացունեն կարծես, թէ եւ ոչ անհե-
ղաշնակ՝ դոնէ մեզ հայերու համար: Դառն
փոքրածութիւն մը, սուգով խառնուած, ըս-
կեպտիկ դարձուց ազգին մեծագոյն մասը,
այնպէս որ այս լուրին առաջին տպաւորու-
թիւնը եթէ սփոփարաւ բան մը ունի իր մէջ,
այդ զգացումին կը յաջորդէ կամ կը խառ-
նուի վարանս մտածում մը թէ ճշմարիտ է
արդեօք:

Անանկալներու թուականի մը մէջ կապ-
րինք, որոնց մեծագոյնը կը պատկանի բա-
ղաբականութեան, ճշմարտ սփինքս մը — առ-
զական բացատրութիւնը գործածելու համար —
որ կերեւայ ինչ որ չէ ու օրին մէկն ալ կըր-
նայ դառնալ ինչ որ ենթադրել չէր տար՝ իր
կողմնակի երեսներովն ու խորհրդաւոր լու-
թեամբը:

Լուրը, զոր կարտատպենք, առեղծուած
մըն է հասարակ մահկանացուներու համար,
այնքան անգամներ յեղյեղուած՝ բայց չի
լուծուած, զոր կը կարգանք կամ կը լսենք
թերեհաւատի աչքով ու ականջով, թէ եւ չե-
մեռանդի սրտով: Զերմեռանդութիւնը, սա-
կայն, իր ուժը շատոնց կորսնցուցած է դժ-
բաղդաբար իրականին առջեւ, և վաղուան
համար ըլլալիք ուխտը կամ մաղթանքը չի
զօրեր այսօրուան ցաւը փարատելու:

Մեր նախորդ թիւի «Օրուան Լուրեր»ուն
մէջ արձագանգ տուինք Հայաստան զրկուելիք
յանձնաժողովին փութանակի կազմութեան
լուրին, — բան մը որ քանիցս ծանուցուած
ու յետաձգուած էր: Թէ եւ պարզապէս ցնորք
է յուսալ որ այդ տեսակ յանձնաժողովներ
ու այդ կերպով եղած նպատակներ կրնան խրա-
մատ մը իսկ գոցել այն ահագին աւերումին
մէջ որուն մասնաւորապէս մեր գլխաւոր հայրե-
նիքը իր զաւկներով, բայց այս պաշտօնական

տրամադրութիւն երեւան գալով այն միջոցին
երբ միեւնոյն ատեն կը կարգանք թէ գետ-
նայինը համաձայնած են Հայաստանի բա-
րենորդութեան գործադրութիւնը պահանջելու,
բնադրաբար կը մղուինք զուգորդութիւն մը
նշմարել այս կրկնակ իրողութիւններուն մէջ:
Եւ, հակառակ իրերու բնական կարգին, ա-
ռաջինը երկրորդին հետեւանք ենթադրել:

Զուեռնալով բնաւ նպատակ ու սրելէ փա-
փագ սին յոյսեր ներշնչել մեզ կարգացող ժո-
ղովուրդին ու պատճառաբանութիւններու
մէջ փնտռել ազգասիրութեան տիտղոս մը որուն
նշարը — ներքեցէք այս ոսկերչական բացատրու-
թեան — շատ իշած է հիմակ ու հրապարակը
ոչողուած կեղծ ուղիներով, կը շատանանք յի-
շել միայն բարենորդմանց լուրը, որ քաղցր չա-
հեկանութիւն մը ունի մեզի համար: Աւելի
զգացում մըն է զոր կարտայայտենք քան կար-
ծիք մը, չուզելով այն պղտիկ դիւանագէտ-
ներու և պղտիկ ատենաբաններու ծաղրելի
դիւրբին մէջ գտնուիլ որոնք քանի մը տող գրել
ու երկու խօսք ըսել գիտնալուն համար մէկ-
մէկ Ռօշֆօր ու մէկմէկ Պիլմարը կը նկատեն
ինքզինքնին և «ալխարհք կառնեն կը ծախեն»,
իրենց յուստեսութիւններով կամ լաւատե-
սութիւններով:

ՕՏԱՐ ԷԶԵՐ

ՅՐԷՏԵՐԻՔ ՖԼԷՇ

ԲՍԱԿԱՆԱՆԵՐՈՒՆ ԹԱԳԱՌՈՐԸ

Ֆրէտ ոչ եւս է:

Լոնտոնէն մեզ հասած այս «Գոյժը», անտարակոյս
մեծ վիշտ պիտի պատճառէ բազմաթիւսներու միջազ-
գային բնկերութեան անդամներուն օրոնց թագաւորն
էր Ֆրէտ, զոր անշուշտ չի ճանչնալու իրաւունքը
ունիլ, բայց որ այս պատճառաւ աշխարհի ամբողջ
քաղաքացիներու մէջ, նշանաւոր դիրք մը և համաշ-
խարհային համբաւ մը ունեցած ըլլալէ չի դուրսի:
Դեռ մէկը չէ գտնուած որ անոր պէս մէկու
մը գրականէն ժամացոյցը կամ քաղքը բոցնել գիտ-
նար այնքան թեթեւաշարժութեամբ և այնքան աղ-
նուական ձեւերով:

Ֆրէտ՝ Նորին քաղաքացիական վեհափառութիւ-
նը՝ ոչ միայն իր արհեստին մէջ հրաշքներ կը գործէր,
այլ ձեռքի շուտութեան կը միացնէր աչքի նշանա-
ւոր դատողութիւն մը:

Վերջապէս բաւական չէ ուրիշին քաղքը յաբաւ
ընել աւելի կամ նուազ վարպետութեամբ, ասկէ
աւելի կարեւոր է գիտնալ թէ այդ քաղքը պարտք
է կամ ոչ:

Ասոր համար է որ Ֆրէտ գործի սկսելէ առաջ
իր շահատակութեան զոհ գացողին վրայ լաւ ակնարկ

մը կը նետէր և ձեռքովը դրածի պէս հեռուէն կը
յայտարարէր — սա մարդը հարկը ոսկիի «ծախու-
կառնեմ»,:

Եւ կամ ձեռքը գրպանը դնելով — իրը չի կար-
ծէք — սապէս կը մրմնջէր:

— Յոգնութիւնս չարժէր, անկուսիին մէկն է:
Իր դատողութեանց մէջ շատ քիչ անգամ կը
սխալէր Ֆրէտ. ինչ որ կատարուեցանէ թէ նշանա-
ւոր քաղաքացի մը և ակնաւոր դիմագէտ մըն էր
միեւնոյն ատեն:

Սակայն օր մը չարաչար սխալեցաւ Նիու Մար-
քըթի ձիարշաւին և իր արհեստական այս սխալը մեծ
ցաւ պատճառեց օրսին:

Ժամանակէ մը ի վեր Պառօն Հիլը շուրջը կը
պտըտիէր. միջոց մը կարծելով որ գործի սկսելու
ժամանակը եկած է, կամայով մը մեծահարուստ
Պառօնին թղթապանակը թուցուց, բայց հակառակ
իր ձեռքի շուտութեան՝ Պ. Հիլը զգաց դրամապա-
նակէն թեթեւալը և քաղաքացիական թագաւորին
դառնալով՝ — «Ֆրէտ, mon ami, սխալ ճամբէ կեր-
թաս կոր, այսօր քաղքը ինծի հակառակ է գրաւ-
ներու մէջ, ամբողջ գրպանի ունեցածս կորսնցուցի,
հետեւաբար դրամապանակս պարտաւ է, ուստի այդ
պարտաւ քաղքը ինձ վերադարձնելէ լաւագոյն լաւ
մը չես կրնար ընել այս պահուս:»,

— Կեանքիս մէջ չպիտի մտնամ այս gaffeur,
կը կրկնէր յաճախ Ֆրէտ:

Բայց օր մը իր վրէժը առաւ, և այնպիսի վաւ-
պետութիւն մը բանեցուց որ կեանքին մինչեւ վերջին
օրը հպարտութեամբ կը յիշէր:

Էրսովի ձիարշաւներէն մէկուն մէջ Բրէնս տը
կայի թղթապանակը շուրջը այնքան նուրբ կերպով
որ իշխանը չզգաց անգամ:

Իր այս շահատակութիւնովը հպարտալիտ՝ հե-
տեւեալ նամակը գրեց իշխանին, իրողութիւնը ա-
նոր ծանուցանելու համար:

Ա. Նորին Արքայական Բարձրութիւն
Կալիսի իշխան

Տէր,

Էրսովի ձիարշաւէն վերադարձին անշուշտ Ձեր
արքայական Բարձրութիւնը իրազեկ եղաւ իր թղթ-
ապանակին... համբարձմանը:

Պատուաւոր գործ մը ըրած ըլլալու գոհունա-
կութիւնը կգգամ յայտարարելով Ձեր Բարձրութեան
թէ այժմ թղթապանակը քովս կը գտնուի որ ինծի
համար կրկին արժէք ունի, որովհետեւ ամեն ատեն
ձեռք չեմ կրնար անցնել թագաւորական իշխանի մը
սխալանոց առարկայ մը:

Պատիւ ունիմ լինելու, տէր, Ձեր արքայական
Բարձրութեան ամենախոնարհ և հպակ ծառան

Ֆրէտ

Քաղաքացիական քաղաւոր

Կալիսի իշխանը այնքան խնդայ և այնքան
գարմացաւ որ հրաման ըրաւ ոստիկանութեան չի
զուլէլ Ֆրէտի:

Այդ օրէն կսկսի թեթեւածեւ պարօնին համ-
բաւը, համբաւ մը որ Մանչը անցնելով Եւրոպիոյ
չրջանը ըրաւ և անկէ տարածուեցաւ Ամերիկա:

Ֆրէտ մէջ ձեռնդրմէնի մը ամեն արտաքին
յատկութիւններն ունէր:

Լոնտոնի զաւակ, Վիկտորին մէջ ծնած էր, հայրը

պատուաւոր վաճառական մըն էր որ իր որդւոյն բաւական կըրթի ժառանգութիւն մը թողուց, և ծննդոց ուրիշին ստակը ուտելէ առաջ իրը լաւեց լինցուց ընչ ժամանակի մէջ:

Ահա՛ քանի մը բառով կենսագրութիւնը այն մարդուն որ Մէնէլիի, Կրտսեթոնի, Հանթօնի և Զօլայի պէս իր համբաւը ունէր աշխարհէս երկու կէտագունդներուն միջոց ուլ:

ԻՔՍ

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

—Այս սարուան մօտան ի՞նչ պիտի ըլլայ, կը հարցնէր մեզի Տիկին մը, դո՛ւք ի՞նչ խմբագիր գիտնալու եք:

—Եթէ իրեւ պարզ անհաս հարցնեիք, մեզի պիտի ըսէի, Տիկին, թէ այս մանուան մօտան կանանցն է, մարդաշան, գիպրիներ, և ահագին փետուրներով գոյաւորները. բայց քանի որ իրեւ խմբագիր ինծի կուղղէք մեր հարցումը, պէտք է ըսեմ թէ Գահիրէի հայ կիներուն հասար այս սարուան մօտան պէտք է ըլլայ... գաղթականներուն օգնել:

—Ի՞նչ, դեռ գաղթական մնա՞ց, հապս ինծի ըսի՞նք թէ եկեղեցին ա՛յ հաց եւ կերակուր չի տար կոր:

—Ճիշդ տեսն համար է որ հիմա կարգը կիներուն եկած է այդ խեղճներուն վրայ գրաւ եւ կրցածինն ընել աւանց վիճակը բարոյեցնելու համար:

—Բայց մեր ձեռքէն ի՞նչ կուգայ:

—Ամեն բան, Տիկին, ամեն բան: Տեսէ՛ք Երուսա, ամեն քաղաքի մէջ կիներէ կազմուած մասնախումբեր կան որոնք ահագին մասնակցութիւն ունին գործերուն գործին մէջ: Եթէ քիչ մը կամք ընէք, կարծուածէն աւելի օգտակար կրնաք ըլլալ գաղթականներուն: Անգամ մը եկեղեցի գացէք եւ տեսէք այդ սարսաղները. ահա՛ կիներ որ իր մերկ սրունքները ծածկելու համար հասարակէ շրջագոյն մը չունի. տղայները գոյիսին եւ ոտքերինն քաց կը պսքսին. մանկամարդ կիներու եւ աղքատներու երեսին վրայ գոյն չէ մնացել, ամենքն ալ կես կուշ կես անօրի եւ իրենց անօրութիւնը պատահաւ մը հաց—պակիրով կը խաբէն օրն ի քուն: Եւ դո՛ւք, Տիկին, մօտան կը հարցնէք, Բասալի, Պարսոյի եւ Բաւոնէի ցուցափեղկներուն մէջ նորութիւն կը փնտռէք եւ մեր մտքէն չանցնիր թէ անդին հարիւր հոգիէ աւելի ազգայիններ գործերուն կարօտ են եւ վերջին յոյսերնին մեր վրայ դրած են: Ահա նորութիւն մը որ մեր սրտին նոր հաճոյքներ եւ անծանօթ զգացումներ պիտի հայթաղէ:

Էրիկ մարդերը տարիէ մը ի վեր շատ աշխատեցան, շատ յոգնեցան, եւ քաւական բան ըրին: Կարգը մերն է, քիչ մը շարժեցէք եւ պիտի տեսնէք թէ որքան անուշ բան է գործը եւ որքան հրապոյր ունի աղջակները միմիկարեցու գործը:

—Բայց տեսն քաղաքը մարալ մը գրեւնալու է:

—Ասկէ աւելի դիւրին ի՞նչ կայ. մեզի պէս երկու երեք կիներ գտնել եւ կազմեցնել պզտիկ յանձնախումբ մը եւ ի նպաստ մեր գաղթականներուն դիմում ըրէք մեր ծանօթներուն: Քանի մը դառնական մեկնէ, գոյգ մը գործալ միշտէն, հոս տեղէն շրջագոյն մը,

հոն տեղէն թօփ մը խառա եւ քանի մը օրուան մէջ պիտի տեսնէք թէ քաւական բան ծողկած է այդ կիսամերկները եւ այդ կես անօրիները կերակուրելու եւ հագուեցնելու համար:

—Հաւատացէ՛ք որ եթէ երկու հոգի ինծի պէս գտնուի, վաղորդե՛ք իսկ գործի կրակիս:

—Էր զգացումներուն վրայ երբեք կասկած չեմ ունեցած, Տիկին, եւ մեծ հաւատք ունիմ մեր ձեռնկերեցութեան վրայ: Գործեցէ՛ք եւ գոն պիտի մնաք, որովհետեւ միմիկար աշխատեցի համար կրնէք. Տիկին Գ., որքան աղոթ եւ վաղը պիտի ըսեմ —Տիկին Գ. որքան բարի է: —Հիմա կրնա՞ք վարանիլ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն հոկտեմբեր 22 թուականով եւրոպական թերթերուն ուղղուած հեռագիր մը կը հաղորդէ որ «Այդ օրը լուր կը շրջէր հանրութեան մէջ թէ Սերաստիա, Ճանիկ, և ուրիշ հայաբնակ դաւաճներ արիւնահեղ դէպքեր տեղի ունեցել են: Զինուորական զօրութիւն զրկուել է բարեկարգութիւնը վերահաստատելու համար»: Այս հեռագիր, որ կէս-պաշտօնական աղբիւրէ կերելի, կաւելցունէ թէ «պաշտօնական շրջանակներու մէջ տեղեկութիւն չունին այս կարծեցեալ դէպքերու մասին»:

Երանի՛ թէ իրաւ «կարծեցեալ դէպքեր» եղած ըլլային ու անհիմն, և ոչ թէ մօտաւոր ու արիւնալի անցեալի մը տխուր դէպքերուն կրկնումը:

—Դեռ պահներուն կողմէ Հայաստանի բարենորոգմանց պահանջման լուրը, զոր յիշած ենք մեր այս օրուան խմբագրութեան մէջ, Տեղի Թեյեկրաւի Վիէնայի թղթակցին կողմէն հեռագրուած է, ինչպէս կերելի նորագոյն տեղեկութիւնէ մը: Դժբաղդաբար, մի և նոյն ատեն հասնելով Սերաստիոյ կողմերը արիւնալի դէպքեր պատահած ըլլալու լուրը, չփոթ ու հակասական տպաւորութիւն մը կը թողու միտքերու վրայ, բնական քաջալերանք կան՝ լաւատեսութեան թեթիւ ընդգրկում մը իսկ ունենալու:

Պէտք է սպասենք ուրեմն տեղի թաղմ ու բացորոշ տեղեկութեանց:

—Անցեալ երկուշաբթի, 13 հոկտեմբեր Կ. Պոլսէն Հալապի հեռագիր մը, զոր հրատարակեցինք նախօրէ թիւով, կը ծանուցանէր թէ մայրաքաղաքի ոստիկաններու թիւն աւելցուած է ի նախադրուած թիւն դաւաճական նոր փորձի մը (attentat) Լանտոնէն, Բարիզէն, ու ժընէվէն եկած հայ յեղափոխականներու որոնք փութով կը փնտռուին:

Այս առթիւ, հոկտեմբեր 19 թուականով, այսինքն չարաթ մը ետք, Կ. Պոլսէն կը հեռագրեն Լանտոնի թերթերուն:

«Օրմանեան Պատրիարքը շատ դժուարին կացութեան մէջ է, որովհետեւ եթէ ճշմարիտ է որ հայ յեղափոխականներ Պոլիս մտած են, այս բան ի դերեւ պիտի հանէ Պատրիարքին հաշտարար ջանքերը»:

—Դարձեալ, Կ. Պոլսէն հոկտ. 19 թուականով Թայմզին թղթակցելը կը հեռագրէ:

«Հայոց Պատրիարքարանը Մարտէն 1000 տոկոս ստացաւ ի հաշիւ 2000 տոկոսն որ խոստացուած է տրուիլ կառավարութեան կողմէ ի նպաստ կարօտ հայերուն»:

«Գուռը վստահացուց Օրմանեան Պատրիարքը թէ նախարարաց խորհուրդը նկատուածութեան պիտի առնէ իր դիտողութիւններն ի մասին Հայաստանի զրկուելիք միջազգային շրջուն յանձնաժողովին անբաւականութեան: Խոստացաւ նաեւ որ վերջեւ մայրաքաղաքին մէջ ձերբակալուած ու բանտարկուած քան հայերէն տաար ի մօտայ պիտի արձակուին»:

* * *

Կրեւելի կառավարչութեան ընտրելինքնուրոյն ցանկը երթալով կը ստուարանայ, ու ելքի մը չի յանդիր բնաւ: Վիէնայի թերթի մը թղթակցը տեսակցութիւն մը ունեցել է գերմանացի Բամբուշէվէնէր փաշայի հետ, մարդիկ օտմ. բանակին, որ յայտարարել է թէ զինուորական կառավարիչ մը միայն կրնայ բարեկարգութիւն հաստատել կղզիին մէջ: Բամբուշէվէնէր փաշա ինքն ալ ընտրելի մըն է այդ պաշտօնին: Զուրկեցիացի վարչապետ Նուման Տրօլի ընտրելութիւնը ի բաց թողուած է, իսկ Շէֆէր պէյ, եթէ երբեք ընդունուի, առժամայ դժուարեւ պաշտօն միայն կրնայ ստանձնել, թէեւ այս ալ անհաւանական կերեւայ:

Հունգարական լրագրի մը խօսքին նայելով, կրեւելի երեւելիները որոշել են պատուաւորութիւնը զրկել թիւր զօրավարին, խնդրել համար որ յօժարի ընդունիլ կղզիին կառավարչութիւնը:

—Տեղի Թեյեկրաւի կիմանայ Վիէնայի թէ Աւստրիա իր դուրծը աւարտած (!) նկատելով ի կրեւել, տրամադրել է եղեր իր զօրքերն ու մարտանաւերը ետ կանչել կղզիէն:

—Ծովային իշխանութիւնը բաւական քանակութեամբ զէնք գրաւել են՝ Բիրէէն կրեւելէ գալու ու օտմ. դուրծ կողմ շոգենալի մը մէջէն որ Կուրծի ընկերութեան կը պատկանէր:

—Քանտիա հետզհետէ վստահալից կացութեան մը կը մատնուի և ծովակալները հոկտ. 20ին գումարում մը ունեցել են հարկ եղած միջոցները ձեռք առնելու համար:

* * *

Հաշտութեան վերջնական պայմանագրին կնքման բանակցութիւնները կը կատարուին Թօփհանէի շէնքին մէջ, ամեն օր, բաց ի կիրակիէ և ուրբաթէ: Կերեւայ թէ համաձայնութեան ամենէն դժուարին կէտը պիտի ըլլայ՝ հիւպատոսական իրաւասութեանց (capitulation) փոփոխման խնդիրը:

—Թուրքերը արտօներ են Թեալիայի ներուն վերադարձը Թուրքաի ու Մանգաթիի կիրճերէն և ուրիշ երկու ճամբաներէ՝ մէկը Թրհալի մօտ և միւրը Հալմիրսի:

Յոյն պատուիրակ Տուրուլիս՝ Էտհէմ փաշայի քով կը մնայ. ուրիշ երկու պատուիրակներ Լամիա և Քալքէնիսի գացել են Թեալիայի ներուն վերադարձը պատրաստելու համար: Սահմանադրութի գծման յանձնաժողովը Վալօ հասել է:

—Թայմզին ուղղուած հեռագրի մը նայելու

լով, մեծ Տէրութեանց Կ. Պոլսոյ զեապանները՝ իրենց լծարդմաններուն միջոցաւ դիտադրութիւններ ուղղելու են արտաքին գործոցնախարար Թէվֆիկ փաշային՝ սա երեք կէտերուն վրայ. 1. Տարտանէլի փարոսները անբաւական կերպով կը լուսաւորուին: 2. Թեւալիոյ մէջ տուրք կը հաւաքուի ի հաշիւ Թուրքիոյ: 3. Թեւալիոյ ոչխարի հօտերը բնակինջ կըլլան:

Հետոնէն հետագիր մը կը հաղորդէ Թէքի զբոսնէին մասը, վերաբաւական գործողութեան մը հետեւանոր: Քաղաքացի թուան՝ Եօրքի զուքսին գտնուի էր:

— Սիւսի թաղապետը երէկ Համ հասեր է:

— Բեղրապոլիէն հեռագիր մը կը հաղորդէ թէ Քէմէլէի գիւղի եկեղեցիին մէջ, արարողութեան միջոցին, կարծուելով որ հրդեհ կայ, ժողովուրդը ահաբեկած սկսեց է զուրա խուժել: Յիսուս հոգի մեռեր են և հարիւր վախճան հոգի վերադարձեր:

— Հինգշաբթի օրը, Աթէնքի մէջ, ճամբուած կամուրները հանդերձի վաճառատուններն ու նալարեցի խանութները տաքի տուեր են: Բաղմաթիւ ձերբակալութիւններ եղան:

— Թուրքիոյ և Պաղարկոյ միջեւ յարձակուիւն կան ու պաշտպանական զինակազմութեան դաշինք մը կնքուած ըլլալու ըստ թոյլտուիւն կը հերքուի: Պաղարկոյ նախարարապետ Պ. Սթըյլիֆ անցեալ շաբթու վառնայի մէջ Ֆէրիստիտ իշխանին հետ երկար տեսակցութիւն մը ունենալէ ետք՝ Կ. Պոլիս ուղեւորել է:

— Կ. Պոլսոյ սերպիական դետաւն Պ. Վլատան Եօրիէվիչ, որ Գարապատ կը գտնուէր, հոկտ. 20ին Պէլլիատ հրապարակեց է Աղեքսանդր թագաւորին կողմէ որ ինքն ալ նոր վերադարձած էր հօրը հետ: Պ. Վլատան Եօրիէվիչ նոր նախարարութիւն մը կազմեց է ազատական տարրերէ: Պ. Սթըյլի նախարարութիւնը տապալուել է այն պատճառով որ Սահմանադրութեան վերաբերման ծրագիրը վտանգ կը սպառնար արքայական գահուն:

— Թուրքիոյ ծխախոտի Բէյիին խառն հասոյթը որ 1896 սեպտեմբերին 160,000 ոսկի եղած էր, այս տարւան միւնայն ամսուն 149,910 ոսկի միայն եղած է, այսինքն 10,090 ոսկի պակաս:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ի պատասխանի Առաջնորդական Տեղապահ Հօր շնորհաւորական հեռագրին, Բարձր Խորհրդին առաջին արարողապետն հետեւեալ հեռագրին ուղղած է.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. 27 հոկտեմբեր
Եգիպտոսի Հայոց Առաջնորդական Տեղապահ Գեր. Յակոբ Առաջ Ծ. վարդապետին

Պատիւ ունիմ Ձեզ հաղորդելու թէ Բարձր Խորհրդը շատ գոհ և ուրախ եղած է այն հեռագրէն որով Ձեր և Եգիպտոսիակ պատուական Հայ ազգին կողմէ շնորհաւորած էիք Ն. Բարձրութեան ծընդեսն բարեբաւորի տարեգարծը:

Կիմանանք թէ Քաղաքական Ժողովն իր երէկի նիստին մէջ զբաղել է զաղթականաց հոգածութեան խնդրովն, առանց սակայն վերջնական կարգադրութեան մը յանդերձ: Յայտնի է թէ հասոյթի միջոցներն սպառած են բուրդովն և Յանձնաժողովն հրաժարական տրւած է:

Այն պաշտպային ուր անկարելի ըլլայ Յանձնաժողովի ատենապետ Ազիզ պէյի հրաժարականն ետ առնել տալ, հակառակ ամեն կողմէ արտայայտուած փափագին, յուսալի է որ Առաջնորդարանի Միտակը առժամաբար հոգայ զաղթականներուն անունի ծախքերը մինչեւ որ կարելի ըլլայ նպաստի ազգիւր մը գտնել:

Ընթերցասիրաց ընկերութեան Դիւանը կը հաղորդէ մեզ թէ ընդհանուր ժողովն այս չորեքշաբթի գիշեր ի նիստ գումարուելով՝ Գործադիր Ժողովն ընտրութիւն կատարել է և ձայնից մեծամասնութեամբ ընտրուել են Տեղապ.

Աւետիս Ամիրսեան
Գարիբէ Լէքէճեան
Գրիգոր Շանթունի
Կ. Օ. Հալսլեան
Միհրան Մանուկեան
Յովհաննէս Եազըճեան
Վառլա Գալստգճեան

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԼՍԱՐԱՆԸ

Այս գիշեր տեղի կունենայ Ընթերցասիրաց ընկերութեան Ե. ընտրանք: Պիտի ատենախօսէ ծանօթ ուսուցիչ և զբաղեւ Տիար Յովհաննէս Աթեան, նիւթ ունենալով «Վերջին գիշերուան երգը»:

Նախորդ երեկ յիշերու պէս, ընտանեկան նուագահանգստի մը կազմակերպուած է արուեստասէր երիտասարդներու խումբի մը կողմէ որ երաժշտական գեղեցիկ հասուածներ պիտի երգէ ու նուագէ: Ատենաբանութիւնը պիտի սկսի ժամ 9ին:

Կիմանանք թէ Տեղապ. Գ. Լեքէճեան և Ա. Ամիրսեան հրաժարական տուած են Գործադիր Ժողովոյ անգամակցութենէ:

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր Խորհրդը չորեքշաբթի իրիկուն մեկնեցաւ Աղեքսանդրիայէն՝ Էտֆինա և Շիպնէ-Բօմ այցելելու, ուսկից Գահրէ պիտի գայ յառաջիկայ չորեքշաբթի, 3 նոյեմբեր: Խորհրդական կառավարման կանգ պիտի առնէ Թանթա և Պէնհա: Ամեն կողմ պատրաստութիւններ կը տեսնուին Ն. Բարձրութեան ընդունելութեան համար:

— Բուէնա Մուհամմէտ Ալիի ամուսնութեան խորհուրդը՝ Ամերիկացի մանկամարդ օրիորդի մը հետ, կը շարունակէ զբաղեցնել տեղական եւրոպական մամուլը: Հրատարակուած լուրերն հակասական են սակայն. Բոսլիք կը ծանուցանէ թէ նախնիքաց օր Մօնթազահի պալատը ընտանեկան գումարում մը տեղի ունեցել է որմէ ետք Բարձր Խորհրդը իր հաւանութիւնը տուել է. իսկ Ժողովն էժիքսիթն, ընդհակառակն, իր երէկի թիւին մէջ Աղեքսանդրիայէն հեռագիր մը հրատարակած է՝ նոյն իսկ այս տեսակ ամուսնութեան խորհուրդի մը գոյութիւնն հերքող:

— Վերջին մարդահամարի արդիւնքին համեմատ՝ ամբողջ Եգիպտոսի խալտի բնակիչներուն թիւն է 600,000:

— Գիտութեան ու քաղաքակրթութեան հարստահարութիւնը: Գահրէի ելեքստական թրամուէյը հազիւ 14 ամիս կայ որ հաստատուած է և անոր զհետեւ թիւը, արար թերթի մը տեղեկութեանց նայելով, հարիւր քառասուն հոգիի կը հասնի, մեռած, ջախջախուած, առանց հաշուելու թիւեւ արկածները: Ձեռք գիտել թէ այդ պէճիական ընկերութիւն ի՞նչ կը շահի Եգիպտոսի մայրաքաղաքին մէջ, բայց ամիսը տասը հոգիի գլուխ կուտէ այս հաշուով: Ասիկայ արգելք մը չէ սակայն որ իր բաժնեթուղթերը որոնք 4 ոսկիի հրապարակ հանուած էին՝ 20 ոսկիի բարձրանան:

— Աղեքսանդրիացիները չորեքշաբթի վաղեցին ձմրան առաջին անձրեւը որ առատօրէն տեղացել է ցորեկ ու գիշեր:

— Գահրէի ոստիկանութիւնը մինչեւ այսօր տանըմէկ կասկածելի անձեր ձերբակալած է՝ Տարպէ-Մուսթաֆա թաղին մէջ երկու կիներու սպանման պատճառաւ: Ոճրագործին կամ ոճրագործներուն ո՛վ ըլլալն հաստատուած չէ տակաւին:

— Յառաջիկայ շաբթու Աղեքսանդրիոյ եղեռնադատ ատենին առջեւ պիտի սկսի՝ անգլիացի Վէլլը ու ձիադանն սպաննողներուն դատը:

— Անցեալ երկուշաբթի Աղեքսանդրիոյ մէջ չորեքշաբթի ելած պահուն ձերբակալուած ալճէրիացի ոստիկանական հակողութեամբ Գահրէ բերուելով, հաստատուեցաւ թէ Պառ Մատակաւորի վերնայարկը խղղուած ալճէրիացիին սպաննիչներէն մէկն է:

— Երկու անգամ Եգիպտոսէն արտաքսուած եւրոպացի մը, որ դարձեալ եկած էր, առջի օրը ձերբակալուեցաւ Աղեքսանդրիոյ մէջ ու իր հիւպատոսարանին յանձնուեցաւ, որ երրորդ անգամ ըլլալով պիտի ճամբէ:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԱՐԻՁ, 29 հոկտ. — Ֆրանսա ձմեռուան պիտոյր կը դրկէ ի կրէտէ՝ իր գորքերուն համար:

ՀՕԼՏԸՆԻ ՖԱՆԹՕՇՆԵՐԸ

Thomas Holdenի հօշակոթ ֆանթօշներու ներկայացումները երէկ գիշեր սկսան Սոլհըր'ս Քլըւլի (Թէաթր Ռայալ) մէջ:

Դարավերջի նշանաւոր գիւտերէն մէկն է Հօլտընի ֆանթօշները որոնց մերենական ճարտար խաղը գերազանց է խել մը գերասաններու բեմական արհեստէն:

Խիստ շատ բազմութիւն կար առաջին ներկայացման ուր հանդիսականները կրցան գաղափար մը կողմէ՝ «Հազար և մէկ գիշերներու», գիւթական բանի մը տեսարաններուն վրայ:

Օթեակ 60, առաջին կարգ 12, երկրորդ կարգ 8 և կողքի 4 զրուշ ուղջ:

Ութ տարեկանէն վար տղաք կէս գին կը վճարեն:

Վաղը կիրակի՝ ցերեկեայ ներկայացում:

Ա. Զ. Գ.

Բաժնիքի և ուրիշ գորքերու վիճակահանութիւնը որ Պոզար Մուրուրի մէջ Բ. Փափագեանի խանութը պիտի քաշուէր Հոկտ. 31ին (Հ. Տ.) որոշուած է ի Պապ-Էլ-Խալք Ս. Միրանեանի խանութը կատարել նոյն թուականին: Հետեւաբար տոմսակ ունեցողները կը հրաւիրուին այս նոր հասցէին դիմել, իրենց շահած գորքերը ստանալու համար:

Ա. Զ. Գ.

Օր. Էօֆէնի ֆափագեան որ Պոլսոյ կարեւոր թաղերու աղագային վարժարաններու մէջ ձեւագիրութեան գրասէր աւանդած և գնահատուած է իրրեւ փորձ և կարող ձեւագիրութեան մը, տարիէ մը հետէ Եգիպտոս հաստատուած է, ձեւագիրութեան գրասէր կառնող թէ՛ մասնաւորաց տուններ և թէ վարժարաններու մէջ: Նոյնպէս կը ստանձնէ կրօնացի հազուատներու պատրաստութիւն՝ շատ ճաշակաւոր կերպով ու զիրամատչելի պայմաններով: Դիմել Փարոսի խորագրատունը:

2-16

Ո՞Վ ԿԸ ՓԱՓԱԳԻ

Միմիայն 120 դրուս վճարելով գնել, ոսկի կը թէն ըսուող, խիստ սիրուն և ընտիր ժամացոյց մը թէ՛ կնոջ և թէ՛ արանց համար, թող դիմէ Սեյվանեան միջերանոցի խան Սալի փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւակերպութեան մէջ, ուր կը գտնուին նաեւ ամեն տեսակ ոսկի, արծաթ, սակեղատ և նիքէլ ժամացոյցներ, պատճի և քօնաղի թողմաղան բանտիւններ, ինչպէս նաեւ գոհարներ: 1-12

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՏ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՏ	ԵՐԵԿՈՑ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» Կոպարան	»	—	3 45
	մեկ.	12 33	7 53		»	Երեկոյ	1 20
Զակաղիկ }	ժամ.	1 34	8 54	Իսմաիլիա	»		
	մեկ.	1 44	9 4				
Իսմաիլիա	առտ.			Զակաղիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	3 40	1 —		մեկ.	3 17	9 3
Սիւէզ Կոպարան	ժամ.	—	5 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
					մեկ.	4 17	9 4
Տըք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35